1789г.
№ 908

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ՎԵՑԱՄԵԱՅ ՀԱՇՈՒՈՑ
## ԵՒ
## ԳՈՐԾԱՌՆՈՒԹԵԱՆՑ

## ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1891—1897 ՈՒՍՈՒՄ. ՏԱՐԻՆԵՐԻ

1890

1898

ԴԱՎՐԷԺ

Տպարան Դաւրիժու Հայոց Արամեան Դպրոցի

12687

Գ. Հ. Տ. Ա. Մ.

12687

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ՎԵՑԱՄԵԱՅ ՀԱՇՈՒՈՑ
## ԵՒ
## ԳՈՐԾԱՌՆՈՒԹԵԱՆՑ

**ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳ.**
**ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ**

1891—1897 ՈՒՍՈՒՄ. ՏԱՐԻՆԵՐԻ

1898

**ԴԱՎՐԷԺ**

Տպարան Դավրիժու Հայոց Արամեան Դպրոցի

Գ. Հ. Տ. Ա. Մ.

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## Վեցամեայ Հաշուոյ և Գործառնութեանց

## ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ.

## 1891—1897 Ուսում. Տարիների

Բովանդակ Պարսկահայերի ընդհանրապէս և Թաւրիզի Հայերի մասնաւորապէս մտաւոր զարգացման աստիճանը միշտ ցածր վիճակի վրայ է կանգնած եղել, բաղդատելով ուրիշ կենդրոններում ապրող հայ ժողովրդի կրթական չափին հետ. միենոյն ժամանակ համարելով այս կացութիւնը միմիակ արդիւնք այն պայմանների և հանգամանքների, որոնցում վիճակված է եղել ապրել։ Մի կողմից Թաւրիզի չքաւոր դասի երկսեռ մանկանց մտաւոր ու բարոյական գործին օժանդակելու անհրաժեշտ կարիքը, և Տիկիններից ոմանց բուռն եռանդը, ծանօթ լինելով նաև ազգային գանձի անձկութեանը. միւս կողմից Կովկասում և Կ. Պօլսում յառաճուն և գործունեայ նպաստամատոյց Ընկերութիւնների բարերար ազդեցութիւնը, որոնք անշուշտ նոր զգլխ ու ազդուութիւն էին սփռում ամենուրեք, վաղուց միտք էին յղացել Թաւրիզի Տիկնանց մի յայտնի շրջանում կազմակերպելու մի Ընկերութիւն համեստ ծրագրով, նպաստ աղքատ դասակարգին, որը լինէր սակայն տևական և օգտակար։ Ուստի այս միտքն իրագործելու համար հիմնուել է Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը մի քանի Տիկինների նախաձեռնութեամբ և մասնաւոր աշխատանքով 1890-ին, և կանոնաւոր կազմութիւն է ստացել 1891-ին։

Ընկերութեանս ծրագիրը, որը սկզբան կազմված էր շատ

սահմանափակ, հաստատել է հանգուցեալ Ստեփաննոս Արքեպիսկոպոս Մխիթարեան 1891 Օգոստոս 1-ին. և նոյն թուականից ևս ընկերութիւնս սկսել է իր գործունէութեան ասպարէզը: Ունենալով փոքր ծրագիր և քիչ դրամագլուխ, գործումքը բնականաբար իր եկամուտի և ծրագրի համեմատ:

Ընկերութեանս եկամուտներն էին՝ անդամավճարները, գանձելով իւրաքանչիւր անդամուհուց տարեկան երկու թուման,

# ՀԱՇՈՒԵ

## 1891 – 92

### ՊԱՐՏՔ

| | ղրան | կպ. | ղրան | կպ. |
|---|---|---|---|---|
| Աշակերտուհիների համար հագուստ և գոգնոց | 111 | 30 | | |
| Դասական առարկաներ | 87 | 95 | | |
| Ձեռագործի նիւթեր գնուած | 579 | 82 1/2 | 779 | 7 1/2 |
| Զուտ դրամագլուխ առ 1 Օգոստոս 1891 | | | 1232 | 42 1/2 |
| | | | 2011 | 50 |



կողմնակի նուիրատուութիւնները և թատրոնից ու երեկոյթից գոյացած հասոյթները: 1891 թուին ընկերութիւնս ունէր 32 անդամուհի, որոնցից 17 ը Բերդաթաղից էին և 15 ը Լիլաւայից:

1891 | 92 Ուսում. Տարեշրջանում Ընկերութիւնս, իբրև նախախայրիք իր ձեռնարկութեան, ունէր Լիլաւայի Օրիորդաց Ուսումնարանում 12 ձրիավարժ աշակերտուհիք, որոնց համար ծախս է եղել համաձայն նոյն տարուայ հաշուեկշռի:

# ԿՇԻՌ

## Ուսում. Տարուայ

### ՊԱՀԱՆՋՔ

| | ղրան | կպ. | ղրան | կպ. |
|---|---|---|---|---|
| 32 Հոգուց անդամավճար | 640 | | | |
| Նուէրներ | 235 | | | |
| » Ղազար Յակոբեանցի միջոցաւ Ռուս. գանձված | 423 | 35 | | |
| Գրական երեկոյթից գոյացած | 67 | 60 | | |
| Ձեռագործութեան վիճակախաղից | 630 | 20 | | |
| Սև փողի շահ | 15 | 35 | 2011 | 50 |

1892 | 93 Ուսում. Տարեշրջանում Ընկերութիւնը ունէր 28 անդամուհի: Ընկերութիւնը կարիք զգալով Կոչ ու Ջէյ Էրզեաոանցի չքաւոր աշակերտուհեաց համար, վճռեց իւրաքանչիւր տարի 10 ձրիավարժներ ընդունել, տալով նրանց ձեւի պարագայքը և հանդերձները: 1892 Թուին ուսումնարանում ունէր 30 ձրիավարժ աշակերտուհիք, հոգալով նրանց պէտքերը համաձայն հետեւեալ հաշուեկշռի:



## ՀԱՇՈՒԵԿՇԻՌ
## 1892—93
### Ուսում. Տարուայ

### ՊԱՐՏՔ

| | ղուան | կպ. | ղուան | կպ. |
|---|---|---|---|---|
| 30 Աշակերտուհեաց հագուստի ծախս | 302 | 25 | | |
| Ձեռագործութեան նիւթեր գնված | 770 | $12\frac{1}{2}$ | | |
| Արհեստանոցի ծախք | 62 | 5 | 1134 | $42\frac{1}{2}$ |
| Զուտ դրամագլուխ | | | 2809 | $22\frac{1}{2}$ |
| | | | 3943 | 65 |

### ՊԱՀԱՆՋՔ

| | ղուան | կպ. | ղուան | կպ. |
|---|---|---|---|---|
| 91 \| 92 Ուսում. Տարուայ դրամագլուխ | | | 1232 | $42\frac{1}{2}$ |
| 28 Անդամուհիներից անդամավճար | 560 | | | |
| Նուէրներ | 275 | | | |
| Արհեստանոցի մուտք | 300 | | | |
| Ձեռագործութեան վաճառքից | 1576 | $22\frac{1}{2}$ | 2711 | $22\frac{1}{2}$ |
| | | | 3943 | 65 |

1893 | 94 Ուսում. Տարեշրջանում ընկերութիւնը ունէր 30 Անդամուհի։



32 Ձրիավարժ աշակերտուհի ուսուցանում, 6 ձրիավարժներ ևս Կար ու Ձևի Արհեստանոցում։

## ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

### 1893—94 Ուսում. Տարուայ

### ՊԱՐՏՔ

| | ռուբլ | կպ. | ռուբլ | կպ. |
|---|---|---|---|---|
| 32 Աշակերտուհեաց հագուստներ | 345 | 95 | | |
| Ձեռագործութեան նիւթեր | 1072 | 90 | | |
| Արհեստանոցի ծախք և տան վարձ | 1111 | 7 $\frac{1}{2}$ | | |
| Տօնածառի պատրաստութեան ծախք | 295 | 95 | | |
| Թատրոնի ծախք | 706 | 35 | | |
| Կորուստ թատրոնական տոմսակներից | 50 | | 3582 | 22 $\frac{1}{2}$ |
| Սովելոց նպաստ | | | 647 | 30 |
| Զուտ դրամագլուխ | | | 4528 | 75 |
| | | | 8758 | 27 $\frac{1}{2}$ |

### ՊԱՀԱՆՋՔ

| | ռուբլ | կպ. | ռուբլ | կպ. |
|---|---|---|---|---|
| 92 \| 93 Ուսում. Տարուայ դրամագլուխ | | | 2809 | 22 $\frac{1}{2}$ |
| Անդամավճար 30 հոգուց և նուէր | 625 | | | |
| Նուէր Բագուից Տիկ. Ի. Յակոբեանցի ձեռամբ | 445 | | | |
| Արհեստանոցի մուտք | 502 | 7 $\frac{1}{2}$ | | |
| Տօնածառից „ | 644 | 75 | | |
| Թատրոնից „ | 1352 | 22 $\frac{1}{2}$ | | |
| Ձեռագործութեան վիճակախաղից | 2380 | | 5949 | 5 |
| | | | 8758 | 27 $\frac{1}{2}$ |

Տաճկահայաստանի աղէտալի կոտորածներից յետոյ Ընկերութիւնս իւր ծրագրի շրջանակից դուրս գործելը իրաւունք համարելով, նրանց օգնելու միտքը յղացաւ: Ուստի Վարչութեան անդամուհիք ինքնայօժար տնէտուն պտտելով, յօգուտ սովելոց հանգանակեցին 375 թուման, աւելացնելով նաև հանգանակուած գումարին ընկերութեանս գանձարանից 647 ղրա, նու-ղարկվեց Ս. Էջմիածին Վեհափառ Հայրապետին 770 րուբլի, որ Նորին Վեհափառութիւնը ուղարկէ, ուր որ կարիք զգացուի:

## ՀԱՇՈՒԵ

### 1894—95

### ՊԱՐՏՔ

| | ղրան | կպ. | ղրան | կպ. |
|---|---|---|---|---|
| Ձեռագործութեան համար գնուած նիւթեր | 1143 | 47 1/2 | | |
| Արհեստանոցի ծախք | 862 | 65 | 2006 | 12 1/2 |
| Զուտ դրամագլուխ | | | 9551 | 7 1/2 |
| | | | 11557 | 20 |



Ընկերութիւնս արժանացաւ Վեհափառ Հայրապետի Սրբատառ Կոնդակն ստանալու ընդ համարաւ 2118: 1894 թուին Ընկերութիւնը ցանկանալով առաւել լայն ծաւալ տալ իւր գործունէութեան, կազմեց նոր ծրագիր աւելի ընդարձակ բովանդակութեամբ: Ծրագիրը 1895 թուին վերահաստատեց Գերապատիւ Սուքիաս Արքեպիսկոպոս Պարզեանց: 1894 | 95 Ուսում. Տարեշրջանում Ընկերութիւնս ունէր դպրոցում 33 ձրիավարժ աշակերտուհի և 66 անդամուհիք:

## ԿՇԻՌ

### Ուսում. Տարուայ

### ՊԱՀԱՆՋՔ

| | ղրան | կպ. | ղրան | կպ. |
|---|---|---|---|---|
| 93 \| 94 Տարուայ դրամագլուխ | | | 4528 | 75 |
| Անդամավճար 66 հոգուց | 1320 | | | |
| Արհեստանոցի մուտք | 737 | | | |
| Տօնածառից " | 457 | 80 | | |
| Թատրոնից " | 1004 | 80 | | |
| Ձեռագործութեան վիճակախաղից | 2172 | | | |
| Ղազար Յակոբեանցից նուէր | 500 | | | |
| Տոկոսիքներ | 836 | 85 | 7028 | 45 |
| | | | 11557 | 20 |

1895 Թուին Արհեստանոցում բացուեց և Գորգագործութեան ճիւղը: 95 | 96 ուսում. տարեշրջանում Ընկերութիւնն ունէր 33 ձրիավարժ աշակերտուհի. 8 մշտնջենաւոր անդամուհիք և 46 հօգի տարեկան անդամուհիներ: Այս տարուայ ընթացքում՝ ուշադրութեան առնելով Տաճկահայ եղբարց կարօտ վիճակը, Ընկերութիւնս իւր անդամուհիների անխոնջ աշխատանքով, յօգուտ յիշեալ տաճկահայոց հանգանակեց 4767 ղրան, և վերածելով տաճկական ոսկու, 105 օսմանեան ոսկի ուղարկեց Ամենապատիւ Իզմիրլեան Պատրիարքին, որից ստացուած է օրհնութեան Կոնդակ ընդ համարաւ 60:



# ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

## 1895 — 96 Ուսում. Տարուայ

### ՊԱՐՏՔ

| | ղրան | կպ. | ղրան | կպ. |
|---|---|---|---|---|
| Արհեստանոցի վարժուհու ռոճիկ և ճանապ. ծախք | 2233 | 50 | | |
| „ ծառայի վարձ | 365 | | | |
| Ձրի աշակերտուհեաց զգեստ, դաս. պար., Թոշակ | 656 | 75 | | |
| Գորգագործութեան ծախք և վարպետին | 633 | 85 | | |
| Տեղայի չքաւորներին դրամական նպաստ | 210 | | | |
| Զանազան ծախսեր | 490 | 90 | | |
| Արհեստանոցի և ձեռագործութեան նիւթեր | 3065 | 45 | 7655 | 45 |
| Զուտ դրամագլուխ | | | 15607 | 5 |
| | | | 23262 | 50 |

### ՊԱՀԱՆՋՔ

| | ղրան | կպ. | ղրան | կպ. |
|---|---|---|---|---|
| 94 \| 95 Տարուայ դրամագլուխ | | | 9551 | 7 1/2 |
| Նուէր Պրն. Թովմաս Թումանեանցից | 2000 | | | |
| 8 մշտնջենաւոր անդամուհիներից | 2000 | | | |
| 46 Տարեկան Անդամուհիներից | 920 | | | |
| Տօնածառից մուտք | 796 | 15 | | |
| Արհեստանոցից „ | 1008 | 70 | | |
| Վիճակախաղից „ | 3781 | | | |
| Նուէր զանազաններից 7 րուբլի | 36 | 60 | | |
| Եւս Նուէր Տիկ. Մարգարիտ Թումանեանցից | 2529 | 75 | | |
| Սարֆ և Թղթադրամի տարբերութիւն | 84 | 20 | | |
| Տոկոսիքներ | 555 | | 13711 | 42 1/2 |
| | | | 23262 | 50 |

1896 Սեպտեմբեր 25-ին Ընկերութիւնս՝ գնահատելով փոքրիկ մանուկների դաստիարակութեան գործը խաղայ տեղ, բաց արաւ Մանկապարտէզ Լիլաւայում, ուր ընդունեց Թոշակաւորների հետ 12 ձրիավարժ մանուկներ, հոգալով նաև նոցա զգեստներն ու ճաշը: Այս տարին Լիլաւայի ուսումնարանում պահում էր 33 ձրիավարժներ, իսկ Կուր ու ջէք արհեստանոցում 10 ձրիավարժ աղջիկներ: Տարեկան անդամուհեաց թիւն էր 34: Ընկերութիւնը ունէր 17 մշտնջենական անդամուհիք և 3 պատուաւոր Անդամներ, որք են՝ օրիորդ Սաթենիկ Մատինեան, պարոններ Համբարձում Թումանեանց և Բաղդասար Մելիք-Սարգսեանց: Ընկերութեան Վարչութիւնս համաձայն իւր 1896 Հոկտեմբեր

# ՀԱՇՈՒԵ

## 1896 — 97

## ՊԱՐՏՔ

| | ղրան | կպ. | ղրան | կպ. |
|---|---|---|---|---|
| Արհեստանոցի ծախք և ռոճիկ | 5730 | 30 | | |
| Մանկապարտիզի ծախք և Վարժուհու ռոճիկ | 3738 | 35 | | |
| Գորգագործութեան ծախս և ռոճիկ | 551 | 55 | | |
| Գաղթականների և տեղացիների նպաստ | 3002 | 90 | | |
| Զանազան ծախսեր | 1016 | 70 | | |
| Կահկարասիք գնուած | 1335 | 50 | 15375 | 30 |
| Զուտ դրամագլուխ | | | 41580 | 45 |
| | | | 56955 | 75 |



24 և 15. րդ նստի որոշման, Վասպուրականի կոտորածներից փախած վասպուրականցի գաղթականներին օժանդակելու ձգտումով, արդէն 97 թիւ Յունվարին հանդանակել էր **4825** ղրան նպաստի գումարն այսպէս՝ **1748** ղր. ընկերութեան գանձից. **1420** ղր. Սալմաստի յանձնախմբից, իսկ մնացածը զանազան բարեսէր նուիրատուներից: Նպաստի բաշխումը որպէս զի արդար լինի, Վարչութեանս Անդամուհիներից երկուսը իրանց սեպհական ծախքերով՝ չնայած ձմեռուայ խստութեան, անձամբ գնացին Սալմաստ և նպաստները բաժանեցին այս եղանակաւ. սալմաստում գնուեց կտաւ, շիլայ, զանազան չիթեր և 37 խալվար ցորեան և առանձին հաւաքած 1800 կտոր զգեստներ:

# ԿՇԻՌ

## Ուսում. Տարուայ

## ՊԱՀԱՆՋՔ

| | ղրան | կպ. | ղրան | կպ. |
|---|---|---|---|---|
| 95 \| 96 Տարուայ դրամագլուխ | | | 15607 | 5 |
| Նուէրներ հանգանակուած Պ. Բաղդասար-Մելիք | | | | |
| Սարգսեանցի միջոցաւ Ռուսաստան և Պարսկաստան | 31434 | 50 | | |
| Տոկոսիքներ | 5165 | 95 | | |
| Տօնածառից արդիւնք | 1243 | 85 | | |
| Թատրոնից „ | 1681 | 40 | | |
| Անդամավճար | 690 | | | |
| Վիճակախաղից մուտք | 1116 | | | |
| Փողի շահ | 17 | | 41348 | 70 |
| | | | 56955 | 75 |

# *1897 — 98*

Որովհետև Ընկերութեանս հաշուեցոյցները կազմւում են ուսումնական տարեշրջանի վախճանին, հետևաբար չէր կարող այս տարուայ հաշուեցոյցը ներկայացնել որոշեալ պայմանաժամից առաջ շատ հասկանալի պատճառներով. բայց որովհետև վճռել էր իւր վեցամեայ տեղեկագիրը դնել ի ցոյց Հայ հասարակութեան, ուստի իւր կողմից յարմար գտաւ աւելացնել նաև 97 | 98 տարուայ մինչև այսօր կատարուած գործունէութիւնը, խոստանալով առաջի առնել հասարակութեան ամբողջ տարեկան հաշուեցոյցը և գործերի վիճակը իւր ժամանակին:

Ընկերութեան Վարչութիւնս տակաւին անցած տարուանից հաւաքել էր կանացի զարդեր յօգուտ գաղթականների, և այս տարուայ Փետրվարին՝ աւելացնելով իւր կողմից մօտ 150 ռուբլու մի գումար, 600 Թումանի արժէքով տպեց վիճակախաղի տոմսակներ, քաջայոյս լինելով յաջողութեանը:

Ընկերութիւնը իւր գործունէութեան և առհասարակ գործոց և կացութեան մասին պարտք և պատիւ համարեց զեկուցումն տալ Ազգիս Վեհափառ Հայրապետին, և փոխարէնը ստացաւ օրհնութեան Կոնդակ Նորին Վեհափառութիւնից, ընդ համարաւ 184, որը կարդացուեց յանկայս Ընդհանուր Ժողովոյ ատենին:

Մուժամբար, Գօթուռ և Վառ գիւղերում եղող գաղթականների համար ընկերութիւնս Առաջնորդական Փոխանորդ Սարաճեան Գեր. Յովսէփ Վարդապետին 145 ռուբլու յանձնեց ցորեան, ալիւր և այլ պիտոյքներ առնելու համար. բացի դրամից առանձին ևս ուղարկեց զգեստներ և այլն:

Ի նկատի ունենալով Ատրպատականում և Թաւրիզում անցեալ տարուանից Վասպուրականցի գաղթականների և ուրիշ

17687



կարօտների օրէցօր բազմանալը, Ընկերութիւնս 97 թիւ Յուլ. 20 ի նստում և Նոյեմբեր 3-ին կայացած Ընդհանուր Ժողովում յարմար էր գտել արծարծել միտք Աղքատախնամ մի ընկերութեան կազմութեան՝ իրան վերապահելով գործի նախաձեռնութիւնը: Գործը մասամբ սկսուած լինելով, ընկերութիւնս յոյս ունի, որ իրականութիւն կը գտնէ այդ ձեռնարկութիւնը ինպաստ խղճալի կարօտեալներին. ընկերութիւնս այդ աղքատախնամ ընկերութեան իբր դրամագլուխ յատկացուցած է իւր գանձից 300 Թումամ՝ այն հանգամանքում, երբ ընկերութիւնը սկսի իւր կանոնաւոր գործունէութիւնը:

Մուժամբար, Ալէմուլք և Մէօհրիւլ գիւղերում ապաստանած 120 ից աւելի ամէն հասակի և սեռի Թշուառ գաղթականներին օժանդակելու համար 250 Թումանի մի գումար յատկացնելով ընկերութիւնս, գնեց ամենաանհրաժեշտ և կենսական պիտոյքներ և իրանց տեղերում կատարեց բաշխումը. տրամադիր լինելով հետզհետէ նպաստել նրանց, եթէ ներէ Ընկ. գանձի վիճակը: Ընկերութիւնս Թաւրիզում բնակուող գաղթական և բնիկ կարօտ ընտանեաց ևս օգնել է և տակաւին օգնում է ըստ չափու և ըստ կարողութեան, իւր անդամուհիների միջոցաւ ստուգելով անհատապէս նրանց կացութիւնը, մանաւանդ երբ վերջիններիս համար վկայել է Թաւրիզի ազգային Առաջնորդարանը:

Ընկերութիւնս իւր գոյութեան օրից ի շարս զանազան բարեսէր ազգայինների, որոնք բաց են արել իրանց սիրտն ու քսակը մեր Ընկերութեան գործերի առաջ, յիշատակութեան արժանի են Թումանեան Եղբարք, որոնք բացի նրանից, որ նուիրել են մօտ 2500 րուբլի փող, այլև ոչ մի բարոյական աջակցութիւն չեն խնայել յօգուտ ընկերութեանս բարենպատակ գործոց, և արժանացել են միանգամայն Ընկերութեանս անկեղծ շնորհակալութեան:

Ընկերութիւնս պատիւ ունեցաւ ստանալու վերջին անգամ Վեհափառ Հայրապետի 500 րուբլի նպաստը ընկերութեան գանձարանին, չնայած ստացել է Նորին Վեհափառութիւնից 2 անգամ քաջալերական Կոնդակ:

Ընկերութիւնս այս տարուանից վճռել է տալ Դարագաղի Աղաղան գիւղի ուսումնարանին տարեկան 20 թուման քանի որ ուսումնարանը գոյութիւն կունենայ:

Վարչութիւնս պատիւ ունի հրապարակաւ յայտնել, որ պատրաստակամութիւն է յայտնում ծանօթացնել Ընկերութեան գործոց և հաշիւների մանրամասնութեան հետ՝ եթէ լինին ցանկացողներ:

---

Ընկերութիւնս իւր գործունէութեան ընթացքում բատ խուռվանն ոչ մի աշխատանք և ազնութիւն չէ խնայել դանձը և գործը ծոխացնելու. բացի իւր հայթայթած աղբիւրներից որք են՝ անդամավճարները, երեկոյթի, թատրոնի, տօնածառի և վիճակախաղի հասոյթները, դիմել է նաև ժողովրդի օգնութեան և բարձրաստիճան անձինքներին, որոնցից ստացել է նուիրատուութիւններ. և այդ հասոյթներով պահել է Մանկապարտէզ, Կար ու Ձևի Արհեստանոց, Լիլաւայի ուսումնարանում չքաւոր սաներ. ժողովրդական սարսափների ժամանակ օգնել է տաճկահայ սովելոց, գաղթականներին և այլ չքաւոր ընտանիքներին և անձանց: Ընկերութեանս գոյութիւնը ծանօթ է նաև Արեգակնափայլ Շահի կառավարութեան: Ընկերութիւնս պատիւ է ունեցել յարաբերութեան մէջ մտնելու նախորդ և ներկայ Սադրազամների հետ. ձեռագործներ է նուիրել և փոխարէնը ստացել դրամական պարգև և գովասանական պաշտօնագիր: Ընկերութիւնս դեռ մեծամեծ յոյսեր է տածում օրբանոց յառաջադիմական քայլեր անելու դաւանելով Հայ ժողովրդի թանկագին համակրութիւնը և մարդասէր ազգայինների ձեռնտուութիւնը: Եւ որովհետև նուիրատուութիւնները գլխաւոր աղբիւր ենք համարում մարդասիրական գործոց համար. ուստի խիդէպ յայտարարում ենք, որ պատրաստ ենք ընդունել յանուն մեր Ընկերութեան ուղարկուած նուիրատուութիւններն հետևեալ հասցէով:



„ Առ Վարչութիւնն Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան —

„ Société de bienfaisance des dames Arméniennes de Tauris, —
TAURIS — Perse

Անդամուհիք Վարչութեան Թաւրիզի Հայ. Բարեգ. Ընկ.

Նախագահ Իսկուհի Յակովբեան
Գանձապահ Արծուիկ Նազարբէկեան

Խորհրդական՝
Սրբուհի Ամատունեան
Մարիամ Մելիք-Սարգսեան
Աղիզ Տէր-Յակովբեան
Սաթենիկ Եղիազարեան
Իսկուհի Մելիք-Խաչատրեան

15 Մարտ 1898
Թաւրիզ

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL011221